Արձանագրություն N 3
ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/17-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «18» հունիսի 2021թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նիստի նախագահ՝ Մարիաննա Դուրգարյան,
Անդամներ՝Մագդա Կարապետյան,
Քարտուղար՝ Ազնիվ Քոթանջյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ ՝Ջուլիետա Բաբայանը:

Օրակարգ
Հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին

Ընդունել ի գիտություն, որ սույն թվականի հունիսի 16-ի հանձնաժողովի նիստի համաձայն ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ի ներկայացված հայտում արձանագրվել էր անհամապատասխանություններ: Դրանով պայմանավորված հանձնաժողովի նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով, իսկ ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ին ծանուցվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Սակայն ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ի կողմից շտկված փաստաթղթում կա անհամապատասխանություն, մասնավորապես՝ Դիմում-Հայտարարություն փաստաթղթից բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝
Հիմք ընդունելով "Գնումների մասին" ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 42-րդ կետը մերժել ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ի կողմից ներկայացված հայտը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը 1-ին ենթակետի՝ հայտարարել գնման ընթացակարգը չկայացած:

Համաձայն "Գնումների մասին" ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ի նյութերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ նշված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի
նիստի նախագահող՝ _____ Մ. Դուրգարյան

անդամներ՝ _____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Ա. Քոթանջյան